



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՊԱԳՈՎՐՈՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Դ. Ն. ԲԱԲԱՅԱՆ

ԿԱՐՏՈՎԼԻ

ՖԻՏՈՖՏՈՐԱ ՀԻՎԸՆԴԻԹՅՈՒՆ  
ՅԵՎ ՊԵՅՔԱՐԵ ՆԲԱ ԳԵՄ





Наркомзем Арм. ССР  
Зерновое управление  
Д. Н. БАБАЯН

Фитофтора картофеля и борьба с ней

Сельхозгиз, Ереван, 1937 г.

# ԿԱՐՏՈՓԼԻ ՖԻՏՈՓՏՈՐԱ ՀԻՎԱՆԴԻԹՅՈՒՆ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ

Կարտոփլի ֆիտոֆտորան համարվում է հիշշյալ կուլտուրայի ամենավասակար հիվանդությունը. իր մասսայական և ուժեղ զարգացման տարիները, գլխավորապես անձրեային ու խոնավ յեղանակներին, կարող եւ համարյա 100% վոչընչացնել վարակված հողամասերի. կարտոփլի բերքը:

Հայաստանում կարտոփլի ֆիտոֆտորայով շատ ուժեղ վարակված համարվում են՝ Դիլիջանի, Կիրովականի և Ստեփանավանի շրջանները. Լինում են տարիներ, յերբ վերոհիշյալ շրջաններում հիվանդության պատճառով սերմացվի համար անհնար եւ լինում զանել առողջ պալարներ:

Բացի այդ, ֆիտոֆտորան հաճախակի հանդիպում է նաև այլ լեռնային շրջաններում, հատկապես այն տարիները, յերբ ամառն անձրեային եւ լինում:

# ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԵՇՆԵՐԸ

Յիսոնֆոռայով վարակվում են կարտոֆլի  
տերեր, ցողունը և պալարները:

Հիվանդության առաջին նշանները կարելի  
յե հայտաբերել մինչև ծաղկելը կամ կոկոնների  
կազմակերպման ժամանակ: Մեր լեռնային  
շրջանների պայմաններում այդ տեղի յեւ ունե-  
նում հունիսի վերջին կամ հուլիսի սկզբներին  
և առաջի հերթին վարակվում են տերենները:

Տերենների վրա յերեսն են գալիս զորշ  
զույնի կլորավուն բծեր, վորոնք աստիճանաբար  
իրար հետ միանալով խոշորանում են և վերջում  
չորանում: Անձրեային, խոնավ յեղանակներին  
տերենների վրա գտնվող բոլոր այդպիսի բծերը  
ներքեի կողմից ծածկվում են սպիտակ, շատ  
նուրբ և հեշտությամբ մաքրվող փոշով, իսկ  
չոր յեղանակներին այդ սպիտակ ծածկոցը շուտ  
չքանում եւ կարտոֆլի այս հիվանդությունն իր  
զարգացման նպաստավոր պայմաններում (խո-  
նավություն) շատ արագ կերպով եւ տարածվում  
բույսի կանաչ մասերի վրա: Տերենների վրայի  
առանձին-առանձին բծերն աստիճանաբար միա-  
ձուլվում են իրար հետ, վորի հետևանքով տերեր  
սկսնում եւ փոռում եւ վարակված զաշորհեավից  
դիտելիս ցրտահարությունից սուժածի տպավո-

ըություն և թողնում։ Զոր յեղանակներին — հիվանդությունը դանդաղ և տարածվում, չորանում են միմիայն առանձին տերեններ, սակայն նրանց հաջորդող անձրեային յեղանակներին նույնիսկ նման թույլ վարակված դաշտերը մի քանի որվա ընթացքում կարող են վոչնչանալ, յեթե ճիշտ իր ժամանակին չահազանդվի և պայքարի համապատասխան միջոցառումներ չձեռնարկվեն։

Յոդանների վրա հիվանդությունն արտահայտվում է ճիշտ այնպես, ինչովեւ տերենների վրա Հիվանդ բծերն իրար հետ միաձուլվում են, և ուժեղ վարակվածության դեպքում ցողունը սեանում և բոլորովին փոռում է։

Դաշտում պալարները վարակվում են հիվանդ տերեններից և վարակված հողից։ Զոր յեղանակին հիվանդությունը պալարների վրա արտահայտվում է հետեւյալ ձևով. պալարները կարծրանում, չմշկում և ձեռքով հեշտությամբ կուրատվում են և թոնավ յեղանակներին հիվանդությունը պալարների վրա անհամեմատ ավելի արագ է տարածվում. պալարները փոռում, դառնում են ջրալի, ունենում են անախորժ հոտ և հաճախ կարտոֆիլը հողից հանելիս փոխանակ առողջ պալարների, սահցվում և անձի ջրալի մասսա։

Յեթե վարակված կարտոֆիլն անզգուշ-

թյան հետևանքով զաշտից ընկնում է պահեստ, առաջ պարարները վարակվում են, վորից վտանգն արտղ տարածվում է, և վարակվում են կարող ենանել մեծ չափերի՝ ընդզրկելով պահեստում զանված բոլոր պարարները:

Վերահիշյալից շատ պարզ է, թե ֆիտոֆտորն ի՞նչուն և ի՞նչ չափով կարող է վատակ կարտոֆիլ բերրեր:

## ՀԵՎԱՆԴԻՄԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Հիվանդության պատճառը շատ մանր, անզեն աչքով անտեսանելի պարագիտ սունկն է, վոր տոլրում և բազմանում են բույսի տարրեր մասերում (տերի, ցողուն, պալար) և քայքայում նրանց:

Սուկի մարմինը բաղկացած է վերին տափանի բարակ թելիկներից, վորոնցով լցված են բույսի հյուսվածքները։ Այն սովորությունը վուշին, վոր մենք խոնավ յեղանակներին նկատում ենք հիվանդ տերիների ներքինի յերեսի վրա, բաղկացած է սուկի մասայական սպամերից, այսպես կոչված՝ սովորներից։

Սովորները տարածվում են ողի, քամու և անձրիկի կաթիլների միջոցով և ընկնելով իրենց շրջապատում զանվաղ առաջ տերիների, ցողունների վրա, նրանց վարակում են։

**Սոլորներն առանձնապես մեծ քանակությամբ զարգանում են գլխավորապես խոնավ յեղանակներին, այդ պատճառով ել հիվանդությունն այդպիսի ժամանակ շատ արագ եւ տարածվում է Սկզբում հիվանդությունը յերեսն եւ զալիս տերեների վրա, տերեների վրայից սոլորները թափվում են զետին՝ հողի մեջ և այդուղից վարակում պալարները:**

## **ԽԵԶՊԻԱԲ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՎ ՆՊԱՍՈՒՄ ՑԵՍՏԾՈՐԱՅԻ ՏԱՐԱԾՄԱՆ**

**Բացի հիվանդության զարգացման և տարածման հիմնական ֆակտոր հանդիսացող խոնավությունից և անձրեացին յեղանակներից, վորոնց մասին արդեն նշված եւ վերելում, ֆիտոֆարայի ուժեղ զարգացմանը նպաստում են նուհետեցալ պայմանները.**

**1. Գուաչեւմ.—Կարտոֆիլի նորմալ աճի համար նպաստավոր չե ցածրադիր, խոնավ և ծանր կավացին հողամասերում ցանք կատարելու նման հողերում սունկն առանձնապես շատ լավ եւ զարգանում, իսկ կարտոֆիլին ընդունակ չի լինում ընդղիմադրելու վարակմանը:**

**2. Կարտոֆիլի ցանքի ուշացումը.—Ձիտոֆոռան առանձնապես ուժեղ զարգանում է**

ամառվա վերջին. կարտոֆիլի ցանքի ուշացման  
հետևանքով բույսի աճեցողությունը հետ ե ընկ-  
նում և դրանից շատ մեծ չափով տուժում է:

3. Չափից դուրս ազտային պարաւանյութ  
տալը.—Շատ ազոտային պարարտանյութ տալու  
դեպքում կարտոֆիլի տերևները շատ ուժեղ են  
զարգանում—վարթամանում, լինում են հյութա-  
լի, նուրբ մաշկով, վորի հետևանքով և հեշտությամբ  
հիվանդանում են:

4. Վոչ բավարար խորությամբ բուկ տալը.—  
Հողի մակերեսին մոտ գտնվող պալարներն  
ավելի հեշտ են վարակվում, քան ավելի խոր  
գտնվողները: Յեթե բուկ տալու խորությունն  
անբավարար ե լինում, նրա պատճառով հիվան-  
դացած պալարների տոկոսը միշտ բարձր ե լինում:  
Փորձերը ցույց են տվել, վոր 10 սմ խորու-  
թյամբ բուկ տալու դեպքում պալարները ֆիտոֆ-  
տորայով չեն վարակվում:

5. Պահպանման նօանակությունը.—Պա-  
հպաններում կարտոֆիլի պահպանման ժամանակ  
ֆիտոֆտորայի առաջացրած վտումի տարածմանը  
նպաստում ե բարձր ջերմությունը, բարձր խո-  
նավությունը և ողափոխության բացակայու-  
թյունը:

# ԳԻՏՈՅՏՈՐԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Ներկայումս բոլոր ուժերը և միջոցները տրամադրված են գյուղատնտեսական բոլոր տեսակի կուլտուրաների, այդ թվում կարտոֆիլի բերքատվության բարձրացման համար, ուստի ֆիտոֆտորայի պատճառով կոլանտեսային և խորհունտեսային դաշտերում նրա բերքի կորուսը, վորակի և քանակի իջեցումը, միանգամայն անթույլատրելի յե գլխավորապես այն պատճառով, վոր այդ հիվանդության դեմ պայքարելու համար գոյություն ունի հեշտ գործադրելի և շատ լավ արդյունք տվող պայքարի միջոց:

Սակայն ֆիտոֆտորայով վարակված շրջաններում անհրաժեշտ ե ճիշտ իր ժամանակին ահազանգել նրա յերեան դալու, մասսայական զարգացման և տարածման մասին, վորպեսզի միանգամայն ժամանակին ու անհապաղ կազմակերպվի, և ուշի ուշով մղվի պայքարը նրա դեմ:

Այսպիսով ֆիտոֆտորայի ուժեղ զարգացման տարիները փառվից հնարավոր կլինի փրկել տասնյակ հազար տոնների համառ կարտոֆիլ և պահպանել հասարակական սննդի համար։ Ֆիտոֆտորայի դեմ ամենահիմնական և արմատական պայքարի միջոցը քիմիական պայքարն ե՝ բորդոյան հեղուկ սրսկելը։

Լրիվ եֆեկտ ստանալու համար, բացի հիմնական պայքարից, անհրաժեշտ է պայքարի մի ամբողջ շարք նախադրուշական միջոցառումներ ևս կատարել, վորոնց մասին կխոսվի ներքեւմ:

Ա. Ճիշտնթերայի դեմ պայմանական ժիմիական մերսով.—Ինչպես նշված է վերելում, կարտոֆիլի պալարները դաշտում վարակվում են տերևներից, ուստի յեթե մենք ճիշտ իր ժամանակին կարողանանք տերևների վրա ֆիտոֆտորայի զարգացումը կանխել, այդ գեղվում կարտոֆիլի պալարները նույնպես ապահովված կլինեն հետագա վարակումից: Այդ նպատակի համար ամառվա ընթացքում կարտոֆիլը պետք է յերկու անգամ սրսկել  $1^0/0$ -անի բորդոյան հեղուկով, վորը վոչնչացնում է տերևների վրայի մնկի սոլորները և խոչընդուռ է հանդիսանում հիվանդոթյան հետագա զարգացմանը:

Բորդոյան հեղուկ պատրասելը.—Մեկ տոկոսանի բորդոյան հեղուկ պատրաստելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր դույլ (12 լիտր) ջրալուծույթի համար վերցնել 120 գրամ պղընձորջասով, 120 գրամ չհանդցրած լավ վորակի կիր (առանց կոշտերի): Բորդոյան հեղուկ պատրաստելու համար նախ պետք է վերցրած պղընձորջասով մանրացնել, դարձնել փոշի, ապա

լցնել վոքրիկ պարկի մեջ և կախ տալ փայտե  
անոթի (տակառի) մեջ գտնվող ջրում։ Սառը  
ջրում պղնձարջասպը դժվարությամբ ե լուծ-  
վում, ուստի նախորոք, որոկելու նախորյակին,  
պետք ե կախել ջրի մեջ, վորպեսզի բորդոյան  
հեղուկ պատրաստելու ժամանակ պղնձարջասպը  
լուծված լինի։ Մի այլ անոթում պետք ե հանգ-  
ցընել նշված քանակով կիր և կրակաթ պատրաս-  
տել։ Պղնձարջասպը և կիրը լուծելուց հետո վերջ-  
նական լուծույթ պատրաստելու համար անհրա-  
ժեշտ ե ամեն մեկ լուծույթի համար վերցնել  
կիսով չափ ջուր։ Վերջնիս քանակը սահմանված  
չափից չպետք ե անցնի։

Այսպես, որինակ, յեթե անհրաժեշտ ե պատ-  
րաստել 10 դույլ բորդոյան հեղուկ, պետք ե վերց-  
նել 1200 գրամ պղնձարջասպ, լուծել 5 կտմ 6 դույլ  
ջրում և 1200 գրամ կիր հանգցնել 5 կամ 4  
դույլ ջրում, վորպեսզի գործածված ջրի ընդհա-  
նուր քանակը հավասար լինի 10 դույլի։ Պղնձար-  
ջասպի և կրի լուծույթը պատրաստելուց հետո  
կրակաթը դանդաղորեն պետք ե լցնել պղնձար-  
ջասպի լուծույթի վրա (և վոչ հակառակը) և փայտե  
ձողիկով անդադար խառնել։

Այսպիսով ստացվում ե վառ կապույտ, յերկ-  
նագույն լուծույթ։ Յերբ լուծույթը պատրաստ ե,  
բակմուսի թղթով պետք ե ստուգել նրա ոեակցիան։

Ճիշտ պատրաստված բորդոյան հեղուկը  
թթու ռեակցիա չպետք է ունենա, այդ նշանա-  
կում ե՝ կապույտ լակմուսի թուղթը հեղուկի  
մեջ իջեցնելիս չպետք է կարմրի:

Յեթե կապույտ լակմուսի թուղթը կարմ-  
րում է, այդ նշանակում է, վոր պատրաստված  
հեղուկի ռեակցիան թթվային է, նրա մեջ պղնձար-  
ջասպի ավելցուկ կա, նման լուծույթ սրսկելիս  
տերևների վրա այրվածքներ կարող ե առաջաց-  
նել: Նման գեղքերում պետք է առանձին մի-  
քիչ կիր հանգցնել, կրակաթ պատրաստել, ավե-  
լացնել ընդհանուր լուծույթի վրա և լսվ խառ-  
նելուց հետո նորից ստուգել նրա ռեակցիան,  
մինչե վոր կապույտ լակմուսի թուղթը գաղարի  
կարմրելուց:

Յեթե լակմուսի թուղթ չկա, կարելի յե  
բորդոյան հեղուկն ստուգել մաքուր գանակով.  
յերկաթը բորդոյան հեղուկի ազդեցությունից  
չպետք է կարմրի:

Պետք է հիշել, վոր բորդոյան հեղուկը չի  
կարելի պատրաստել յերկաթյա ամաններում և,  
բացի այդ, սրսկելուց հետո ավելցուկը չպետք է  
պահել, վորովհետեւ լուծույթը բուժման համար  
անպետքանում է: Այդ իսկ պատճառով ել յու-  
րաքանչյուր բուժման համար պետք է պատ-

ըաստել ճիշտ այնքան, վորքան հնարավոր ե ող-  
տագործել մի որվա ընթացքում:

Սրսկման ժամկետները.—Սեղոնի ընթաց-  
քում սրսկում կատարել 2 անգամ, առաջինը՝ յերբ  
տերեների վրա յերեան են զալիս ֆիտոֆտորայի  
առաջին նշանները՝ բծերը, վորպիսին մեր ոլայ-  
մաններում սովորաբար լինում ե մինչև կար-  
տոֆլի ծաղկելը կամ ծաղկելու ընթացքում:  
Սրսկման առաջին ժամկետը վոչ մի դեպքում  
չպետք ե բաց թողնել կամ հետաձգել, վորի  
համար շրջանում պետք ե կազմակերպել բու-  
ժումը, նախապատրաստել բոլոր բուժանյու-  
թերը և պատրաստ լինել սրսկումը ձեռնարկելու  
ճիշտ նշված ժամանակին, վորից հետո միայն  
սիստեմատիկորեն հետևել առաջին բծերը յերե-  
վալուն:

Յեթե հիվանդությունը յերեան ե զալիս  
թեկուղ միայն մի դաշտում, անհրաժեշտ ե,  
առանց ուշացնելու, իսկույն բուժումն սկսել  
ամբողջ շրջանում: Պայքարը թեկուղ մի քանի  
որով ուշացնելը վտանգ ե սպառնում բերքին,  
վորովինետե ֆիտոֆտորան շատ արագ կերպով  
կարող ե տարածվել շրջանի մի կետից մյուսը  
և ընդգրկել մեծ տարածություններ:

Այն հողամասերում, վորտեղ հիվանդությունը

շարունակում եղարգանալ, անհրաժեշտ երկու  
պորդ անգամ սրկսել՝ առաջին սրսկումից 15—20  
որ հետո։ Շատ անձրևային տարիները, յերբ հի-  
վանդությունը դեռ շարունակվում է, պետք ե-  
սրսկել նաև յերրորդ անգամ՝ 2-րդից 15—20 որ  
հետո։ Մեկ հեկտար կարտոֆիլ բուժելու համար  
պահանջվում է 45—60 դույլ բորդոյան հեղուկ,  
նայած կուլտուրայի զարգացմանը։

1937 թ. Համամիութենական Հողժողկո-  
մատի կարգադրության համաձայն, Գիտոֆտո-  
րայի դեմ պայքարելու համար, բացի բորդոյան  
հեղուկից գործադրվելու յենակ «ԱԲ» պրես-  
րատի փոշի՝ մեկ հեկտարին յուրաքանչյուր բուժ-  
ման համար վերցնելով 12—15 կիլոգրամ։

Բ. Պայմարի այլ միջոցներ օհւութեալ գիտութեալի  
դեմ.—Բացի սրսկումներից, Գիտոֆտորայի զար-  
գացումը կանխելու համար կատարել նաև հե-  
տեւյալ նախազգուշական միջոցառումները։

1. Ցանքի համար վերցնել կարտոֆիլի միան-  
գամայն առողջ պալարներ։

2. Ռւշադիր և խոր բուկլից կատարել 10 սմ-ից  
վոչ պակաս։ Լավ բուկ տված թփերի տա-  
կի պալարներն ավելի քիչ են վարակվում։

3. Կարտոֆիլի այն հողամասերում, վորտեղ  
տերևները Գիտոֆտորայով ուժեղ վարակված  
են, բերքահավաքից 5—7 որ առաջ վարակված


կանաչ մասսան հնձել և այրել, վորպեսզի կարտոֆիլը հանելու ժամանակ անմիջական շփում չունենա պալարների հետ, և վարակեն:

4. Կարտոֆիլի բերքահավաքը կատարել չորյեղանակին:

5. Բերքահավաքից հետո, նախքան կարտոֆիլը պահեստ տեղափոխելը, անհրաժեշտ է փոել—չորացնել, վորից հետո ընտրել հեռացնել վասկած և կիսափառ պալարները. Վերջիններս վարակը տարածում են շոեմարաններում՝ պահելու ժամանակ:

6. Կարտոֆիլն անպայման պահել չոր պահեստներում, Ցելսիուսի 4 աստիճանից վոչ բարձր ջերմության պայմաններում՝ պահեստն ապահովելով ոդ ափոխությամբ:

Միմիայն ճիշտ կիրառելով բոլոր վերոհիշյալ կանոնները և, վոր գլխավորն ե, ճիշտ, իր ժամանակին կատարելով բուժումը՝ հնարավոր կլինի կարտոֆիլի բերքը պահպանել ֆիտոֆտորա հիվանդությունից:



1006

Պատ. խմբագիր՝ Խ. Հովսեփյան

Մասն. խմբագիր՝ Լ. Բեկհովսեփյան

Թարգմանեց՝ Ս. Գրիգորյան

Տեխ. խմբագիր և սրբագրիչ՝ Խ. Այվաղյան

Կոնտրոլ սրբագրիչ՝ Դար. Հակոբյան

Դրամի թիվ՝ Լիազոր № 1198

Հրատ. № 446, տիրաժ 1000, պատվեր № 575

Հանձնվել է արտադրության 1937 թ. հունիսի 28-ին

Ստորագրվել է տաղագրության 1937 թ. հուլիսի 15-ին

---

Գյուղհեռատի տպարան, Յերևան, Նալբանդյան, 11

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0040274

(034)

ԴՐԱՅ 13 և.

356

A — I  
4579



Наркомзем Арм. ССР  
Зерновое управление  
Д. Н. БАБАЯН

Фитофтора картофеля и борьба с ней

Сальянъ, Еразанъ, 1937 г.